# Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Ք.Երևան Նոր-Նորք վարչական շրջան N112 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքային նախագիծի կատարման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի պահանջները,տեղում կատարված չափագրությունները և մասնագիտական ուսումնասիրությունը,

Շինությունը բաղկացած է 12.5x43.8մ հատակագծայի չափերով երկհարկանի երկու մասնաշենքերից, որոնք իրար հետ կապված են 3.7x15մ հատակագծային չափերով երկու միջանցքներով: Շինության մի հատվածը իրար հետ կապող մեկ միջանցքով չի պատկանում մանկապարտեզին, (վերակառուցված է բնակելի տարածքի)որի տանիքի վերանորոգումը չի ներառվել սույն նախագծում:

Տանիքը քառալանջ է, իրականացված փայտե կոնստրուկցիաներով, ազբոշիֆերյա ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացման համակարգով:Տեղում կատարված զննման արդյունքում պարզվեց,որ տանիքի հիմնական կրող կոնստրուկցիաների(կանգնակ,մարդակ, ծպեղնառտք,տապաստ,որմնափայտ ,կավարամած և այլն) վիճակը բավարար է:

Տանիքի հիմնանորոգման համար հիմնականում նախատեսված են հետևյալ աշխատանքները.

1.Ազբոշիֆերի ծածկույթի քանդում ջրորդանների և ջրհավաքների հետ միասին,
2.Ջրհոս խողովակների և ձագարների ապամոնտաժում,
3.Վնասված փայտանյութի փոխարինում նորով,
4.Ծպեղնառտքերի կապում մետաղալարով շենքի կրող էլեմենտներին (պարապետ, ծածկի սալ և այլն),
5.Փայտե կոնստրուկցիաների հանգույցների (թեքան-ծպեղնառտք, կանգնակ-մարդակ և այլն) ամրացում լրացուցիչ ճարմանդներով ( скоба),
6.Պրոֆիլավոր ցինկապատ թիթեղյա ծածկույթի իրականացում գագաթի հարթ ցինկապատ թիթեղի հետ միասին,
7.Ջրորդանների և ջրհավաքների իրականացում,
8.Ջրահեռաման խողովակների և ձագարների տեղադրում,
9.Ձեղնալուսամուտների վերկառուցում շերտափեղկերի ու փայտյա ելարանների հետ միասին,
10. Մասնաշենքերը կապող միջանցքի ջակտոնային հատվածների և քիվի իրականացում, երեսապատում հարթ ցինկապատ թիթեղով,
11.Փայտյա կոնստրուկցիաների, կավարամածի ու տախտակամածի մշակում հակահրդեհային ու հականեխիչ լուծույթով:

Ծածկի ասբոշիֆերյա ծածկույթի քանդումից հետո,անհրաժեշտ է նորոգել,լրացնել և փոխել վնասված փայտե էլեմենտները,նախորոք նրանց տեղերը և քանակը համաձայնեցնելով նախագծային կազմակերպության հետ:

## ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| Դիրք | Ա ն վ ա ն ո ւ մ | Չափ. միավոր | Քանակ | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| | Քանդման աշխատանքներ | | | |
| 1 | Ալիքավոր ասբոշիֆերային ծածկույթի քանդում | մ$^{2}$ | 618 | |
| 2 | Ջրհորդանների քանդում | մ | 125.0 | |
| 3 | Ձագարների և ջրհավաքների քանդում | կետ | 8 | |
| 4 | Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում | մ | 49 | |
| 5 | Շին.աղբի հեռացում | տ | | |
| 6 | Իրականացվող աշխատանքներ | | | |
| 7 | Տանիքի ծածկույթի իրականացում ցինկապատ պրոֆիլավոր մետաղաթերթով /ԿՊ-25-0.55 մմ/ | մ$^{2}$ | 597.0 | |
| 8 | Ջրհորդանների իրականացում ցինկապատ հարթ թիթեղով (δ=0.55մմ) | մ | 156 | |
| 9 | Գագաթի իրականացում հարթ ցինկապատ թիթեղով (δ=0.55մմ B=330մմ) | մ | 81 | |
| 10 | Փայտյա էլեմենտների լրացում, փոխարինում | մ$^{3}$ | 3.80 | |
| 11 | Ջրհավաքների իրականացում հարթ ցինկապատ թիթեղով (δ=0.55մմ) | կետ | 10 | |
| 12 | Ձագարների իրականացում հարթ ցինկապատ թիթեղով (δ=0.55մմ) | կետ | 10 | |
| 13 | Ջրհոս խողովակ հարթ ցինկապատ թիթեղից Ø150 δ=0.55 մմ | մ | 73 | |
| 14 | Ճակտոնային մասերի երեսպատում հարթ ցինկապատ թիթեղով(δ=0.55մմ ) | մ$^{2}$ | 2.50 | |
| 15 | Քիվի երեսպատում հարթ ցինկապատ թիթեղով(δ=0.55մմ ) | մ$^{2}$ | 18.00 | |
| 16 | Ձեղնալուսամուտների վերակառուցում շերտափեղկերի և փայտե ելարանների հետ միասին | հատ | 4 | |
| 17 | Ձեղնալուսամուտների երեսապատում հարթ ցինկապատ թիթեղով (δ=0.55մմ) S=4x4.5մ$^{2}$ | մ$^{2}$ | 18 | |
| 18 | Փայտ շերտափեղկերի տեղադրում (800x700մմ) | հատ | 4 | |
| 19 | Փայտե կոնստրուկցիաների պատում հականեխիչ և հակահրդեհային նյութով | մ$^{3}$ | 18.0 | |
| 20 | Փայտե կավարամածի և տախտակամածի պատում հականեխիչ և հակահրդեհային նյութով | մ$^{2}$ | 700 | |
| 21 | Լրացուցիչ ճարմանդների տեղադրում փայտե կոնստրուկցիաների ամրացման համար Ø10 AI L=500մմ | հատ | 100 | |
| 22 | Ծպեղնավոտքերի կապում մետաղալարով Ø2x4մմ պարապետին կամ ծածկի սալերին տեղադրվող խարիսխներից | տ | 0.033 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ք.ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ 5-րդ ԶԱՆԳՎԱԾԻ,ՄԱՌԻ 9 ՀԱՍՑԵՈՒՄ Հ.112 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | | | ՊԱՏՎԵՐ N «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/43-2» | | |
| | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ | Փուլ | Թերթ | Թերթեր |
| ՏՆՕՐԵՆ | Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | | ԱՆ | ՃՇ-2 | 12 |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Գ.ԴԱԼԼԱՔՅԱՆ | ԲԱՑԱՏՐԱԳԻՐ:ԾԱՎԱԼԱԹԵՐԹ | «Թ.Ա.Հ.Գ.Գրիգ» ՍՊԸ | | |